ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 267-Ա/2 «23» փետրվարի 2024 թ.

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի «ա», «գ» և «ժ.1» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 2024 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի կանոնակարգը և մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն համապատասխանաբար հավելված № 1-ի և հավելված № 2-ի:

2/23/2024

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված № 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի ___փետրվարի___ *23* *-ի*
№ ___267___ *-Ա/2 հրամանի*

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2024 թվականին անցկացվող խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի (այսուհետ՝ Մրցաշար) նպատակն է՝

1) հանրապետությունում հեծանվային սպորտի և առողջ ապրելակերպի մասսայականացում,

2) դպրոցականների շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում,

3) հեծանվային սպորտի դերի բարձրացում, առողջ ապրելակերպի խթանում, ֆիզիկական տոկունության զարգացում, մրցակցության հետաքրքրվածության բարձրացում (մոտիվացում), ինչպես նաև լավագույն արդյունքների հասնելու ձգտում:

2. Խնդիրներն են՝

1) հեծանվային սպորտի պարապմունքներին դպրոցականների բավարար ներգրավվածության և առողջ ապրելակերպի բավարար քարոզչության ապահովումը,

2) զանգվածային մարզական միջոցառումներին դպրոցականների հետագա մասնակցության ապահովումը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Մրցաշարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցաշարի 1-ին փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և Երևանի քաղաքապետարանը, իսկ 2-րդ՝ եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովը՝ համագործակցելով «Հայաստանի հեծանվային մարզաձևերի ֆեդերացիա», «Սիրողական հեծանվային սպորտի և հեծանվային զբոսաշրջության ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունների և «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ:

III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Մրցաշարն անցկացվում է 2 փուլով՝

1) 1-ին փուլ՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում՝ սեպտեմբերի 10-ից 15-ը,

2) 2-րդ՝ եզրափակիչ փուլ՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ՝ Ծովագյուղ-Սևանա լճի թերակղզի (15 կմ ճանապարհահատվածում)՝ 2024 թվականի սեպտեմբերի 20-ից 21-ը (մեկնարկը՝ ժամը 11:00-ին):

IV. ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Մրցաշարը անցկացվում է 2 տարիքային խմբերով՝ մասնակցում են Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների և վարժարանների 7-9-րդ և 10-12-րդ դասարանների աշակերտներից կազմված հավաքական թիմերը:

1) 1-ին տարիքային խումբ՝ 7-9-րդ դասարանների աշակերտներ, թիմի կազմում՝ 1 տղա, 1 աղջիկ և 1 ֆիզկուլտուրայի ուսուցիչ,

2) 2-րդ տարիքային խումբ՝ 10-12-րդ դասարանների աշակերտներ, թիմի կազմում՝ 2 տղա, 2 աղջիկ և 1 ֆիզկուլտուրայի ուսուցիչ,

3) մրցաշարի 1-ին փուլին կարող են մասնակցել հանրապետության բոլոր դպրոցների և վարժարանների թիմերը,

4) 2-րդ՝ եզրափակիչ փուլին կարող են մասնակցել մարզային փուլում 1-ից 3-րդ տեղերը գրաված դպրոցների կամ վարժարանների հավաքական թիմերը,

5) յուրաքանչյուր մարզից ընդամենը՝ 18 աշակերտ, ֆիզկուլտուրայի 6 ուսուցիչ և յուրաքանչյուր մարզից 1 ներկայացուցիչ,

6) 2-րդ՝ եզրափակիչ փուլին մասնակից թիմը պետք է մրցավայր ներկայանա սեպտեմբերի 20-ին՝ անձը հաստատող փաստաթղթերով (անձնագիր կամ ծննդյան վկայական), յուրաքանչյուր աշակերտի համար դպրոցի տնօրենի կողմից հաստատված տեղեկանք՝ լուսանկարով,

7) մրցաշարին չեն կարող մասնակցել դպրոցական թիմերի այն մասնակիցները, ովքեր երկու տարի անընդմեջ մրցանակային տեղեր են զբաղեցրել:

7. Հեծանվավազքի 1-ին փուլի անցկացման կարգն ու պայմանները որոշում են ՀՀ մարզպետարանները և Երևանի քաղաքապետարանը, իսկ 2-րդ փուլի անցկացման կարգն ու պայմանները՝ Նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը:

8. Թիմերը պետք է մրցավայր ներկայանան դպրոցի կողմից տրամադրված հեծանիվներով (1.95 և ավելի չափի անիվներով) և պարտադիր սաղավարտով: Ցանկացած տիպի խճուղային, էլեկտրական և մոտորային շարժիչներով հեծանիվները արգելվում են, ինչպես նաև արգելվում են խճուղային և սպորտային ղեկով հեծանիվի մոդիֆիկացված ցանկացած հեծանիվ, արգելվում է նաև կոնտակտային ոտնակների կիրառումը:

9. Յուրաքանչյուր մասնակից մեկնարկին (start) և վերջնարկին (finish) իր հեծանիվը պարտավոր է ներկայացնել տեխնիկական զննում իրականացնող հանձնաժողովին:

10. Մասնակիցների կողմից մրցման ընթացքում ցանկացած խախտումների, ընդ որում նաև այլ տրանսպորտային միջոցներից օգտվելու (բռնվելու), ինչպես նաև սույն կանոնակարգի

8-րդ և 9-րդ կետերը խախտելու դեպքում, մասնակիցը կորակազրկվի և առաջիկա երեք տարիներին իրավունք չի ունենա մասնակցելու տվյալ մրցաշարին:

11. Պահանջվող պայմաններին չհամապատասխանող մասնակիցների մասնակցությունը Մրցաշարին չի թույլատրվելու:

12. Արդյունքները ամփոփվում են մրցումների ավարտից անմիջապես հետո:

V. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

13. Մրցաշարի 1-ին փուլ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մասնակիցները և դպրոցները պարգևատրվում են հավաստագրերով և գավաթներով, իսկ 2-րդ՝ եզրափակիչ փուլին՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցները և մասնակիցները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, մեդալներով, դրամական մրցանակներով: Եզրափակիչ փուլում՝ 1-ին տեղը գրաված դպրոցը կպարգևատրվի նաև գավաթով:

14. Մրցաշարի եզրափակիչ փուլում բոլոր մասնակիցներին, մրցավարներին և կամավորներին տրվում է մարզաշապիկներ, արևային գլխարկներ, մասնակցության համարներ և հավաստագրեր:

VI. ԾԱԽՍԵՐԸ

15. Հեծանվավազքի 1-ին փուլի անցկացման հետ կապված ծախսերը (մրցավարներին սննդի օրական վճար, գավաթներ, հավաստագրեր թիմերին և մասնակիցներին) և 2-րդ փուլի անցկացման հետ կապված ծախսերը (մրցավարներին սննդի օրական վճար, մասնակիցներին գիշերակաց (սննդի և գիշերավարձի օրական վճարի չափ), ճանապարհածախս, մարզահագուստ (մարզաշապիկ, գլխարկ), գավաթներ, մեդալներ, հավաստագրեր, շնորհակալագրեր, հուշանվերներ, ծաղկեփնջեր, տպագրական նյութեր, տարածքի ձևավորում, նկարահանման, ուղիղ եթերի ապահովում, շարժական բեմ և լեդ էկրանի ապահովում, տրանսպորտային ծառայություն, հաղորդավարների ծառայություն, դրոշների ձեռք բերում, մրցավարներին և կամավորներին տեղում սննդի օրական վճար, գրենական պիտույքներ, մրցավարներին դրամական պարգև) կատարվում է ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին, գործուղման ծախսերը (ճանապարհածախս և գիշերակաց) հոգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

16. Երկու տարիքային խմբերում 2-րդ՝ եզրափակիչ փուլում՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը և մասնակիցները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով և դրամական պարգևներով՝ 1-ին տեղ գրաված դպրոցը պարգևատրվում է 4,000,000 ՀՀ դրամով, 2-րդ տեղը՝ 2,500,000 ՀՀ դրամով և 3-րդ տեղը՝ 1,500,000 ՀՀ դրամով, պարգևատրվում են նաև դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչները՝ 1-ին տեղ՝ 700,000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 500,000 ՀՀ դրամ և 3-րդ տեղ՝ 300,000 ՀՀ դրամ: Հեծանվավազքի հաղթող թիմերի աշակերտները կպարգևատրվեն դրամական մրցանակներով. 1-ին տեղ՝ 6 մասնակից՝ 150,000-ական ՀՀ

դրամ, 2-րդ տեղ՝ 6 մասնակից՝ 100,000-ական ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 6 մասնակից՝ 75,000-ական դրամ:

Հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառված չեն:

VII. ՀԱՅՏԵՐԸ

17. Մրցաշարի 1-ին փուլի մասնակցության հայտերը (համաձայն հավելված № 2-ի՝ ծննդական, անձնագրի կամ նույնականացման վկայական, ինչպես նաև դպրոցի տնօրենի կողմից հաստատված տեղեկանք՝ նկարով) ներկայացվում են ՀՀ մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան, իսկ 2-րդ՝ եզրափակիչ փուլի հայտերը ներկայացվում են Նախարարության սպորտի քաղաքականության վարչություն մինչև 2024 թվականի սեպտեմբերի 17-ը ներառյալ (էլ. հասցե՝ sergey.abrahamyan@escs.am):

18. Հարցերի դեպքում զանգահարել Նախարարության հետևյալ հեռախոսահամարներով՝ (010) 59-96-33, (010) 59-96-32, մասնագիտական հարցերի դեպքում՝ (077) 85-81-08, տեխնիկական հարցերի դեպքում՝ (096) 56-60-01 (երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00):

Հավելված № 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի փետրվարի 23-ի
№ 267 -Ա/2 հրամանի

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱՁՔԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ----------

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Անձնագիր (սերիա, համար)	Դպրոց, դասարան	Բնակության վայր, հասցե	Բժշկի ստորագրություն
1.						
2.						
3.						

Հանրակրթական դպրոցի տնօրեն՝ ----------/----------/

Ֆիզկուլտուրայի ուսուցիչ՝ ----------/----------/

Բժիշկ՝ ----------/----------/